

# Հայաստանի համայնքների միության նախագահի ընտրության ընթացակարգը

## Կանոնադրության համապատասխան դրույթները

18.1 Միության նախագահը ընտրվում է Միության Ընդհանուր ժողովի կողմից հինգ տարի ժամկետով փակ, գաղտնի քվերակությամբ, եթե նախագահի պաշտոնին հավակնում են մեկից ավելի թեկնածուներ: Միության նախագահի թեկնածու կարող է լինել վերջին հինգ տարիների ընթացքում համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի պաշտոնը զբաղեցնող կամ զբաղեցրած յուրաքանչյուր անձ: Ընտրվելուց հետո Միության նախագահը չի կարող զբաղեցնել պաշտոն տեղական ինքնակառավարման կամ պետական կառավարման մարմիններում կամ իրականացնել որևէ այլ վճարովի աշխատանք: Նախագահը կարող է վերընտրվել:

## 1. Ընտրության կազմակերպումը

Միության նախագահի ընտրության գործընթացի պատշաճ կազմակերպման համար պատասխանատու է Միության գործադիր տնօրենը<sup>1</sup>:

## 2. Թեկնածուների առաջադրման կարգը

- ՀՀՄ-ի անդամների հաջորդ հերթական Ընդհանուր ժողովից առնվազն 25 օր առաջ Միության աշխատակազմը բոլոր անդամ համայնքներին ուղարկում է նամակ (փոստային և էլեկտրոնային տարբերակով)`
  - i. տեղեկացնելով Ընդհանուր ժողովի ամսաթվի և Միության նախագահի ընտրությունների կազմակերպման մասին,
  - ii. տրամադրելով տեղեկատվություն նախագահ դառնալու համար սահմանված պահանջների մասին (համաձայն Կանոնադրության 18.1 հոդվածի),
  - iii. առաջարկելով անդամներին թեկնածություն առաջադրել նախագահի պաշտոնում ընտրվելու համար,
  - iv. սահմանելով թեկնածությունների առաջադրման վերջնաժամկետ և տրամադրելով թեկնածությունների ներկայացման հասցե (փոստային և էլեկտրոնային):
- Միության նախագահի ընտրության կազմակերպման և այդ պաշտոնում ընտրվելու նպատակով թեկնածությունների առաջադրման մասին հայտարարություն պետք է տեղադրվի նաև Միության կայքում և/կամ սոցիական էջերում:
- Միության նախագահի պաշտոնում ընտրվելու համար առաջադրման յուրաքանչյուր հայտ պետք է ներկայացվի գրավոր և պարունակի առաջադրվող թեկնածուի անուն ազգանունը, հասցեն և ամփոփ ինքնակենսագրությունը` հավաստելու նախագահին ներկայացվող պահանջներին առաջադրված թեկնածուի համապատասխանությունը (համաձայն Կանոնադրության 18.1 հոդվածի<sup>2</sup>):
- Առաջադրման հայտը կարող է ուղարկվել թղթային տարբերակով կամ էլեկտրոնային փոստով` նախքան առաջադրման համար սահմանված վերջնաժամկետը:
- Յուրաքանչյուր համայնքի ղեկավար կարող է ինքնառաջադրվել կամ առաջադրել այլ համայնքի ղեկավարի, ավագանու գործող անդամի կամ վերջին հինգ տարիների ընթացքում համայնքի ղեկավարի պաշտոն զբաղեցրած կամ ավագանու անդամ հանդիսացած անձի թեկնածություն: Եթե թեկնածուն առաջադրվել է մեկ այլ անձի կողմից, ապա առաջադրված անձը, նախքան առաջադրման համար սահմանված վերջնաժամկետը, պետք է տա իր գրավոր (հնարավոր է նաև էլեկտրոնային փոստով) համաձայնությունը:

<sup>1</sup> Եթե գործադիր տնօրենն այս գործընթացին առնչվող հնարավոր ֆինանսական կամ անձնական շահ ունի, ապա պետք է նախօրոք հայտնի այդ մասին, և Վարչությունը պետք է պատվիրակի ընտրության կազմակերպման գործառույթը որևէ անկախ անձի:

<sup>2</sup> Թեկնածուն պետք է լինի համայնքի գործող ղեկավար կամ ավագանու անդամ կամ վերջին հինգ տարիների ընթացքում զբաղեցրած լինի համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի պաշտոն:

### 3. Ընտրության կազմակերպումը

- Ընդհանուր ժողովի գումարումից առնվազն 3 աշխատանքային օր առաջ Միության աշխատակազմը Միության բոլոր անդամներին էլեկտրոնային փոստով ուղարկվում է առաջադրված բոլոր թեկնածուների մասին տեղեկատվություն, որը պետք է տեղադրվի նաև Միության կայքում և/կամ սոցիալական էջերում: Տեղեկատվությունը պետք է ներառի թեկնածուների հակիրճ կենսագրությունը:
- Եթե նախագահի պաշտոնի համար առաջադրվել է միայն մեկ թեկնածու, Ընդհանուր ժողովի նախագահողն այդ մասին տեղեկացնում է ժողովի մասնակիցներին: Եթե առաջադրված թեկնածուն բավարարում է Միության նախագահին ներկայացված բոլոր պահանջներին, ապա Ընդհանուր ժողովին մասնակիցող Միության անդամները կարող են ձեռքով քվեարկության միջոցով կատարել ընտրություն: Նիստի նախագահողը չի կարող լինել առաջադրված թեկնածուներից մեկը: Եթե Միության գործող նախագահը, ով Կանոնադրության համաձայն հանդիսանում է Ընդհանուր ժողովի նախագահողը, առաջադրված միակ թեկնածուն է, ապա ձեռքով քվեարկության կազմակերպման ժամանակահատվածում ժողովը պետք է նախագահի ժողովին մասնակցող անդամներից ամենատարեց (իր համաձայնությամբ):
- Եթե առաջադրվել մեկից ավելի թեկնածուներ, ընտրությունը կատարվում է փակ գաղտնի քվեարկությամբ: Ընդհանուր ժողովին մասնակցող յուրաքանչյուր անդամ համայնքի ղեկավար ունի մեկ ձայնի իրավունք, ասոցացված անդամները քվեարկելու իրավունք չունեն: Բոլոր անդամների քվեները հավասարազոր են:
- Քվեարկությունից առաջ յուրաքանչյուր անդամ համայնքի ներկայացուցչի աշխատակազմի կողմից տրվում է Միության Նախագահի պաշտոնի համար առաջադրված բոլոր թեկնածուների անունները պարունակող մեկ քվեաթերթիկ: Քվեաթերթիկ ստացած յուրաքանչյուր անդամ պետք է ստորագրի նախապես կազմված ցուցակում իր անվան դիմաց և քվեաթերթիկը գցի նախատեսված քվեատուփի մեջ: Անդամներին տրվող քվեաթերթիկի թիվը պետք է արձանագրվի և քվեարկության ավարտին համեմատվի քվեարկությանը մասնակցած անդամների թվի հետ:
- Քվեարկության արդյունքները հաշվում և ամփոփում է գործադիր տնօրենի կողմից նշանակված երեք փորձառու, անկախ անձանցից բաղկացած ընտրական հանձնաժողովը: Թեկնածուներից յուրաքանչյուրը, ինչպես նաև գործադիր տնօրենը, կարող են ունենալ քվեարկության ընթացքին և քվեաթերթիկների հաշվման գործընթացին հետևող դիտորդներ:
- Ամենաշատ ձայներ հավաքած թեկնածուն համարվում է ընտրված Նախագահի պաշտոնում: Ընտրական հանձնաժողովը ընտրության արդյունքների մասին տեղեկացնում է Ընդհանուր ժողովի նախագահողին, նախագահողն էլ արդյունքների մասին հայտնում է ժողովի մասնակիցներին՝ նշելով ընտրված Նախագահի անունը:
- Այն դեպքում, երբ երկու թեկնածուներ հավաքում են հավասար քանակությամբ քվեներ, ընտրական հանձնաժողովի ադամները պետք է գրեն երկու թեկնածուների անունները առանձին, նույն չափի թղթերի վրա, դրանք տեղադրեն տուփի մեջ և փոխանցեն Ընդհանուր ժողովի նախագահողին: Վերջինս առանց նայելու պետք է վերցնի թղթերից մեկը և հայտնի դրա վրա գրված թեկնածուի անունը որպես ընտրված նախագահ: